Ներել նրանց, ովքեր մեղք են գործել

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Պատկերացրեք, որ կորնթացիների նման ձեր ծխի մարդիկ կարիք ունեն մեծացնելու իրենց սերն ու ներողամտությունը մեղավորների հանդեպ: Այդ առիթով եպիսկոպոսը հրավիրել է ձեզ՝ ձեր դասի կամ քվորումի ժողովի սկզբում կիսվել ներման մասին մի կարճ մտքով: Մի քանի րոպեում համառոտ շարադրեք, թե ինչ եք ասելու: Ներառեք հետևյալը.

1. Առնվազն մեկ հատված կամ արտահայտություն Բ Կորնթացիս 2.7-11-ից:
2. Մեկ այլ սուրբ գրություն կամ Եկեղեցու ղեկավարի հայտարարություն: (Կարող եք օգտագործել Երեց Դանքընի հետևյալ հայտարարությունը կամ նրա կողմից նշված սուրբ գրություններից մեկը):
3. Ձեր սեփական մտքերն ու վկայությունը սեր և ներում տալու անհրաժեշտության մասին, նաև, թե դա ինչպես կարող է օգնել մեզ ավելի մոտենալ Փրկչին:

Ներման մասին ուսմունքները

Յոթանասունից երեց Քեվին Ռ. Դանքընը ասել է.

Ես համոզված եմ, որ մեզանից շատերն են ցանկանում ներել, բայց դժվարանում են դա անել: Երբ մենք անարդարության ենք հանդիպում, անմիջապես ասում ենք. «Այդ մարդը սխալ է գործել: Նա արժանի է պատժի: Որտե՞ղ է արդարությունը»: Մենք սխալմամբ կարծում ենք, որ *եթե* ներենք, արդարությունը ինչ-որ պատճառով չի գործի և պատիժներից կխուսափեն:

Դա պարզապես այդպես չէ: Աստված կսահմանի պատիժ, որն արդար է, քանի որ ողորմածությունը չի կարող կողոպտել արդարությանը (տես Ալմա 42.25): Աստված սիրով հավաստիացնում է ձեզ և ինձ. «Միայն ինձ թողեք դատաստանը, քանզի այն իմն է, և ես կհատուցեմ [Բայց թող] խաղաղություն լինի ձեզ հետ» (ՎևՈւ 82.23) (Քեվին Ռ. Դանքընը, «Ներման ապաքինող քսուքը», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2016, 33–34):

- Մատթեոս 5.43-44
- Եփեսացիս 4.32

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Forgiving Those Who Have Sinned*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.